№ 13 ԹԻՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼ 10

1896

ԹԻՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼ 10 № 13

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

# ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾԱՆԱԹԱԹԵՐԹ

Հրատարակւում է ամեն չորեքշաբթի օրերը

Տարեկան գինն է Թէհրանում 12 ղռն. վեցամսեան 6 ղ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղ. վեցամսեան 8 ղ. Ռուսաստան 3 րուբլի. վեցամսեան 2 րուբլի. Օտար երկիրները 8 ֆրանք. վեցամսեան 5 ֆրանք: Հասցէ՝ Teheran Rédaction ASTCH-AREVELIAN

«ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆԻ» Խմբագրութիւնը բաց է ամեն օր բացի կիրակի եւ տօն օրերն:

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով. խրաքանչիւր բառին 1 շահի:

## ԲԱՑՒԵԼ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ԾԱՆԱԹԱԹԵՐԹԻ 1896 Թ.

### Ա. Տ. „ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ“ Ա. Տ.

*Բաժանորդագինն է Թէհրանում տարեկան 12 ղռան վեցամսեայ 6 ղ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղռան, վեցամսեայ 8 ղռան: Ռուսաստան տարեկան 3 րուբլի վեցամսեայ 2 ր. Օտար երկիրներ 8 ֆրանկ վեցամսեայ 5 Ֆ. Թէհրանում ձեռքով ծախուածները հատը 6 շահի: բաժանորդագինը կանխիկ է:*

*Բաժանորդագրութեան համար դիմել ուղղակի խմբագրութեան:*

## Ա Զ Գ

Նամակներ և թղթակցութիւններ ուղղել հետեւեալ հասցէին:

Խմբագրութիւն Աստղ-Արեւելեանի՝ Redaction du journal Astgh-Arevelian

Խնդրում ենք այն ամեն պարոններից, որոնք գործ ունին խմբագրութեանս հետ, իրենց նամակները ուղղակի խմբագրութեանս հասցէին ուղղեն և ոչ թէ մասնաւոր անձանց:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

----

Միայն Իտալացոց պարտութիւնը ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ազգերի գոյութեան պայմաններից մէկը. Խոստանալ եւ կատարել. Նամակներ Դավրէժից. Նամակ Համադանից. Նամակ խմբագրութեան Թէհրան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ի՞նչ գաղտնիք կայ. Յայտարարութիւններ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Մատեկայի աշխարհում. Մի քանի խօսք կանանց մասին:

### ՄԻԱՅՆ ԻՏԱԼԱՑՈՑ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

----

Սեպտ. 6-ի թւակիր The Weekly Times (անգլիական թերթը) իւր առաջնորդողում այսպէս է ասում «Այս շաբաթ էլ անցաւ առանց որեւէ ներքին դէպքերի. իսկ արտաքին դէպք կամ արկածն է միայն, Իտալացոց Աֆրիկայում կրած պարտութիւնը, որ շփոթեցրել է ընդհանրութեան մտքերը»: Այս առելուց յետոյ տալիս է նաև հետեւեալ լուրերը. Չաքա Գիաւուր և Բիթլիզի սահմաններում, Քիւրդերը 15 հայ ընտանիքներ կոտորեցին, այն պատճառով, որ չկամեցան մահմետական մնալ: Քիրշահիրում 4 հայ սպանւել և 30 վիրաւորւել են. ինչպէս նաև ժանդարմների հսկողութեան տակ՝ Ալբիսթան երթացող 16 Զէյթունցիներից ինը հոգի կոտորւել են. Ադանայի Ֆրանսական հիւպատոսը հեռագրում է թէ այն տեղում երկու հայեր սպանւել և 15 հոգի էլ վիրաւորւել են և շատ այսպէս սրտալոյզ լրեր է շարում միմիանց ետեւից, որոնք զարմանալի է որ այնքան կարեւորութիւն չեն կարողացել ունենալ, որ եթէ ոչ ամբողջ Եւրոպայի գէթ մի մասի միտքը շփոթէր և յուզէր, ինչպէս Իտալացոց կրած պարտութիւնը խառնեց և միմիանց զարկեց ամբողջ Եւրոպան: Մոռացութեան տուեց Արեւելքում կատարւող խժդժութիւնները... անյայտացաւ և ջնջւեցաւ հայկական խնդիրը... ուրեմն Վանի, Մուշի, Խարբերդի, Մարաշի, Դիարբէքիրի, Էրզրումի վերջապէս Հայաստանի ամեն անկիւնում, գիւղում և քաղաքում անընդհատ կատարւող սպանութիւնները, բանտերի մէջ թունաւորւող և կրակի ու խարանի տակ մեռնող անմեղ հայերի մահւան անհերքելի տեղեկութիւնները կարող չեն արեւմտեան քաղաքակիրթ մտքերը յուզել և գութ շարժել. այո, Իտալացիները պարտութիւն կրեցին և 4,500 զոհ էլ տւեցին, բայց զէն ի ձեռին, քաջութեամբ կռւելով պատերազմի դաշտում, և ոչ թէ հայերի պէս անոէր անտէրաբար սպանւեցին, բռնաբարւեցին և մինչև այսօր էլ զուրկ պաշտպանութեան ամեն միջոցներից տալիս են կրօնի և հաւատի հազարաւոր մարտիրոսներ. որոնց միայն վերջին տարւայ տւած զոհը 300,000-ի է հասնում: Այս ամեն տխուր եղելութիւնները ինչպէս յայտնում է կարեւորութիւնից զուրկ էին և չկարողացան Եւրոպայի աչքին ներկայանալ արտաքին ծանր մի դէպք եւ ինչ խրատունք կարող է ունենալ հայը իւր ամբողջ գոյութեամբը պահանջել Եւրոպայից գութ և օգնութիւն, քանի որ նա իւր քաղաքական շահերով այնքան էլ կապւած չէ Եւրոպային, ինչպէս արեւմտեան որեւէ կառավարութիւն և ազգ. մենք լաւ ենք հասկանում որ հայերի ներկայ ջախջախւած և կիսաշունչ վիճակն էլ Եւրոպային բռւական ծանրութիւն է պատճառում, և նոյն իսկ այդ պատճառով է, որ Հայաստանի քրիստոնեաների 300000-ի ահագին կոտորածը համեմատելով իտալացիների տւած 4,500 զոհին մի կարեւորութիւն չկարողացաւ ունենալ և թէ Եւրոպական ազգերի միտքը չկարողացաւ յուզել ինչպէս Ադովաի ճակատամարտը....

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱԶԳԵՐԻ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՄԷԿԸ

—

Ազգերի յառաջադիմական ընթացքը եթէ կանգ է առնում, նորա անիւները եթէ փշրւում են, ուրեմն նրան մնում է դիմել դէպի մահ, դէպի գերեզման, կամ դէպի այն կործանեբեր կէտը, որ կոչւում է այլասերումն:

Մի որեւիցէ ազգ, մի որեւիցէ համայնք ընդ միշտ անհետանում է աշխարհից սուզւելով միայն պատմութեան էջերը, իւր գոյութիւնը սխուր կեանքի նկարագրութեամբ, երբ անընդունակ է լինում ժամանակի պահանջների հետ յարմարւելու, զարգանալու իւր քայքայւած կեանքը բարոքող կազմակերպութիւնը վերանորոգելու, երբ աշխատում է հինական պատեր կանգնեցնել ամեն մի թարմ հոսանքի առաջ. երբ ապրում է կատարելապէս կղզիացած, երբ շփւում է շարունակ լոկ իւր սեպհական գաղափարների հետ, երբ մարմնացած միքենայի պէս միշտ կրկնում է «ինչ որ տեսել ենք այն կանենք» (քէօռ թութուղի բրախմաք) տխուր նախադասութիւնը, կրկնում ենք այդ հանգամանքում ազգերը մեռնում են կանգնած և յառաջադիմասէրների հոսանքին հանդիպելով կամ խորտակւում են նրանցից և կամ ճմլւում նրանց քայլերի տակ:

Արհեստական մեքենայութիւնները, ճնշումը, բռնութիւնը, կոտորածը, սուրը անզօր են մի ազգ անհետացնելու, խաչաճ ջնջելու, եթէ նա (այդ ազգը) իրեն զօրավիգ ունի վերածնու

